



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք.Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք. Հեռ/Ֆաքս (+374 23) 2 36 63 E-mail kotayk@mta.gov.am

-----N-----

**ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ**

**ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ**

Այս յուրահատուկ օրվան համահունչ և ջերմ բարեմաղթանքներով շնորհավորում եմ Մայրության և գեղեցկության տոնի առթիվ:

Մաղթում եմ, որ բոլոր հայ մայրերի հոգիներն այս տոնի, ինչպես նաև տարվա բոլոր օրերի ընթացքում պարուրված լինեն բերկրանքի յուրահատուկ զգացողություններով:

Տոնական այս օրվա շնորհավորանքներին պետք է հավելել նաև այն ջերմ սիրո և ակնածանքի դրսևորումները, որոնք մշտապես ձոնվում են հայ մայրերին ու ընդգծում նրանց բացառիկ կերպարի ուրույն նրբերանգները:

Դարձյալ շնորհավորում եմ ու ևս մեկ անգամ ցանկանում ընդգծել հայ ժողովրդի պատմության ողջ ընթացքում հայ կնոջ և հայ մայրերի ունեցած յուրօրինակ դերն ու կարևորությունը, որը բացառապես միտված է ընտանիքների պահպանման, ամրության ու անասանության, ինչպես նաև հայրենասեր քաջորդիներ դաստիարակելու նվիրական գործին:

Եղեք առողջ և անհոգ, ամենայն բարիք Ձեզ:

*Հարգանքներով*

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ